



Յեղիաթ մանուկներին

Փոքրիկ Կիկին

Նաիրա Յամբարձումյան



Փոքրիկ Կիկին շատ էր սիրում զուգվել-զարդարվել և հյուր գնալ: Բազում ընկերուհիներ ուներ, որոնց հետ սիրում էր պաղպաղակ ուտել ու չափչփել առվակի մերձակա տարածքները: Առավոտյան, երբ լվացվելուց հետո բոլորը զբաղվում էին առօրյա հոգսերով, փոքրիկ Կիկին դեռ երկար կանգնում էր առվակի հայելանման ափի մոտ և հմայված դիտում իր սեփական արտացոլանքը:

Ո՛չ, փոքրիկ բարեկամս, չմտածես, թե նա ինքնասիրահարված էր, պարզապես սիրում էր ամեն վայրկյան միայն իրենով զբաղվել: Բոլորը նրան պճնանուլ էին անվանում, քանի որ շատ թիթիզիկն էր... Նույնիսկ փոքրիկ ծղոտն զլխարկ էր կրում, որ չարևահարվի, խատուտիկներից ու երիցուկներից ծաղկեպսակներ էր հյուսում զլխին հարմար:

Չկարծեք թե փոքրիկ Կիկին փնթի էր, ո՛չ, նա զբաղվում էր նաև իր փետուրիկների մաքրմամբ և կես ժամը մեկ հենց նույն առվակում լվանում էր կարմիր տոտիկները: Իսկ երբ աչքերը դարձնում էր



երկու կեռ կիսալուսիններ, ուրեմն էլի անպայման մի չարածճի բան էր մտածել: Տնային գործերում մայրիկին օգնում էին եղբայրները: Կիկին հինգ եղբայր ուներ: Երբեմն այնքան էր տարվում իր արտաքինով, որ եթե եղբայրները չմտածեին նրա ուտելու մասին, ողջ օրը, գուցե, այդպես էլ ոչինչ չուտեր: Չկարծեք, թե նա ծուլ էր, նա պարզապես չէր սիրում օգնել մայրիկին, այլ միայն՝ զբաղվել իրենով:

Գարնանային մի սովորական պայծառ առավոտ էր: Սովորական եռուզեռ էր: Մեղուներն իրենց փոքրիկ դուլներով անուշաբույր նեկտար էին փոխադրում: Օդը բուրում էր ծաղիկների բարձուքամբ, և առվեզրի կանաչ գորգին, կրկին ինքնամոռաց, իր կարմիր տոտիկներն էր լվանում փոքրիկ Կիկին՝ անընդմեջ ուղղելով ծղոտն գլխարկը: Եվ ահա այդ առավոտ, որ շատ սովորական էր ու արևոտ, հարևան բակի թխահեր Կանաչաչքը տեսավ Կիկիին ու որոշեց... նախաճաշել...

Յեռվից հեռու բավականին երկար զննելով թիթիզիկին, ճկվեց, ծգվեց, կորացրեց մեջքը և սահո՛ւն-հաստատո՛ւն քայլերով մոտեցավ բաղիկին: Կիկիի աչքերը սարսափից քար կտրեցին, երբ ջրի հայելու մեջ իր ծղոտն գլխարկի հետևից տեսավ Կանաչաչքի գլուխը...

Ինչպե՛ս էր ուզում մեր փոքրիկ պճնամուլը նախաճաշ դառնալ, ինչպե՛ս էր ծղրտում, ինչպե՛ս էր անիծում այն օրերը, երբ անվտանգության մասին մայրիկի դասերը լսելու փոխարեն, զբաղվում էր բուլորովին անիմաստ գործերով:

Ինչպե՛ս հիմա կհամբուրեր մայրիկի ձեռքերը և ներում կխնդրեր պատճառած բոլոր անհարկի նեղությունների համար, միայն թե... միայն թե շուտափույթ ազատվեր Կանաչաչքի ճանկերից...

Փոքրիկ Կիկիին, սիրելի՛ բարեկամս, փրկեց միայն պատահականությունը. նրա ծղրտոցից արթնացել էր ճերմակապոչ ու ճերմակականջ Բիմը և անցել փայտե ցանկապատից այս կողմ, իսկ դու կարծում եմ գիտես շուն ու կատվի «բարեկամության» մասին...

Այդ օրվանից Կիկին այլևս չանտեսեց մայրիկի խորհուրդները, լսում էր նրան, կատարում բոլոր հանձնարարությունները և խնամքով ու մեծ հոգատարությամբ վերաբերվում նաև եղբայրներին: